ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«31» հոկտեմբերի 2017 թվականի № 10-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի նոյեմբերի 10-ի ՀՀ բնապահպանության նախարարության՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 99 և 2017 թվականի նոյեմբերի 20-ի ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության՝ «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 2577 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի նոյեմբերի 27-ի թիվ Ֆ-347/17 գրությունը, «ԱՐԿԻ» ՍՊ ընկերության 2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 02 գրությունը և Ընդերքի գործակալության պետի պաշտոնակատարի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԱՐԿԻ» ՍՊ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) 50 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/575 թույլտվությունը՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամասը՝ 1.X=4458028 Y=8416166 2.X=4458184 Y=8415922 3. X=4458234 Y=8415952 4.X=4458484 Y=8415956 5.X=4458638 Y=8416104 6.X=4458644 Y=8416158 7.X=4458596 Y=8416240 8.X=4458460 Y=8416230 9.X=4458270 Y=8416340 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 849335 մ^3 տուֆի մարվող պաշար և լեռնահատկացման թիվ L-575 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4458028 Y=8416166 H=1080 (h=11.7), 2.X=4458184 Y=8415922 H=1075 (h=6.7),

3. X=4458234 Y=8415952 H=1076 (h=5.6), 4.X=4458484 Y=8415956 H=1082 (h=3.2), 5.X=4458638 Y=8416104 H=1088 (h=2.9), 6.X=4458644 Y=8416158 H=1091 (h=3.8), 7.X=4458688 Y=8416300 H=1098 (h=0), 8.X=4458682 Y=8416396 H=1102 (h=0), 9.X=4458392 Y=8416408 H=1090 (h=0), 10.X=4458280 Y=8416394 H=1083.8 (h=0), 11.X=4458080 Y=8416352 H=1076.0 (h=0), 12.X=4458048 Y=8416304 H=1075.0 (h=0), (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 24.6 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 15500մ^3 տուֆի արդյունահանվող պաշար:

3.Կնքել ընդերքի տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ 575 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր):

4. Ընդերքի գործակալության պետին՝

1) ծանուցել ընկերությանը՝ ոչ ուշ քան 5 աշխատանքային օրվա ընթացքում վճարել ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքը.

2) հրավիրել ընկերությանը 10-օրյա ժամկետում վավերացնելու (ստորագրելու և կնքելու) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Կաքավաձորի տուֆի հանքավայրի Պարտիզակ տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ -575 պայմանագիրը.

3) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց (ստորագրելուց և կնքելուց) հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

4) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

5) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

5. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

7. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ